**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ N 41հ**

ք. Երևան 22.10.2025թ.

**«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆԻ (ՌԵԿՏՈՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի 2025 թվականի հոկտեմբերի 21-ի N18-1132կգ-25 գրությամբ ներկայացված թիվ 62220625 քրեական վարույթով մեղադրյալ Սրբուհի Ռաֆիկի Գևորգյանի պաշտոնավարման կասեցումը որպես համակցված այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին որոշումը, ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 14-րդ կետով, 27-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությամբ, «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կանոնադրության 41-րդ կետի 2-րդ ենթակետով, ելնելով Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2025 թվականի հոկտեմբերի 22-ի հարցման կարգով նիստի քվեարկության արդյունքները (կողմ՝ 17, դեմ՝ 0)՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է՝**

1. 2025թ. հոկտեմբերի 29-ից «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի տնօրենի (ռեկտորի) ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Լիլիթ Սերյոժայի Մկրտչյանին (նույնականացման քարտի համարը՝ 006325518, տրվել է 30.08.2017թ., 049-ի կողմից)՝ սահմանված կարգով նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր մինչև օրենքով սահմանված կարգով Սրբուհի Ռաֆիկի Գևորգյանի պաշտոնավարման կասեցման վերացումը:

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**